Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
օգոստոսի 28-ի նիստի N 36
արձանագրային որոշման

ՎԱՐԿ ՀԱՄԱՐ 5398-ԱՄ

Ֆինանսավորման համաձայնագիր

(Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

միջև

Ամսաթիվ՝ մայիսի 23-ին, 2014 թ.

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Ստացող») և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ («Ընկերակցություն») միջև 2014 թ. մայիսի 23-ին կնքված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ: Ստացողը և Ընկերակցությունը սույնով համաձայնում են.

ՀՈԴՎԱԾ I – ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր դրույթները (որոնք սահմանված են սույն Համաձայնագրի Հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված տերմիններն ունեն Ընդհանուր դրույթներում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում դրանց վերագրված նշանակությունները:

ՀՈԴՎԱԾ II — ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2.01. Ընկերակցությունը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված կամ դրանում հիշատակված պայմաններով Ստացողին տրամադրել տասներեք միլիոն ինը հարյուր հազար Հատուկ փոխառության իրավունքներին համարժեք վարկ (այսուհետ՝ «Վարկ» կամ «Ֆինանսավորում»)՝ սույն Համաձայնագրի Ժամանակացույց 1-ում նկարագրված ծրագրի ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով («Ծրագիր»):

2.02. Ստացողն իրավասու է առհանել Ֆինանսավորման հասույթները՝ սույն Համաձայնագրի Ժամանակացույց 2-ի IV Բաժնի համաձայն:

2.03. Ֆինանսավորման չառհանված մնացորդի դիմաց Ստացողի վճարելիք տարեկան Պարտավորության վճարի առավելագույն դրույքաչափը հավասար է մեկ տոկոսի կեսին (1%-ի 1/2):

2.04. Առհանված վարկային մնացորդի դիմաց Ստացողի վճարելիք տարեկան Սպասարկման վճարի առավելագույն տարեկան դրույքաչափը հավասար է մեկ տոկոսի երեք քառորդին (1%-ի 3/4):

2.05. Առհանված վարկային մնացորդի դիմաց Ստացողի վճարելիք տարեկան տոկոսադրույքը կազմում է մեկ և մեկ քառորդ տոկոս (1.25%):

2.06. Վճարման օրերն են յուրաքանչյուր տարվա մարտի 15 -ը և սեպտեմբերի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը մարվում է սույն Համաձայնագրի Ժամանակացույց 3-ում սահմանված մարման ժամանակացույցի համապատասխան:

2.08. Վճարման արժույթն ԱՄՆ դոլարն է:

ՀՈԴՎԱԾ III — ԾՐԱԳԻՐ

3.01. Ստացողը հայտնում է Ծրագրի նպատակների իրականացման պարտավորություն ստանձնելու մասին: Այս իմաստով՝ Ստացողը Ծրագիրն իրականացնում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) միջոցով՝ Ընդհանուր դրույթների Հոդված IV-ի համաձայն:

3.02. Առանց սույն Համաձայնագրի Բաժին 3.01-ի դրույթների սահմանափակման և բացառությամբ այն դեպքերի, երբ Ստացողը և Ընկերակցությունը ձեռք են բերում այլ համաձայնություն, Ստացողն ապահովում է Ծրագրի իրականացումը սույն Համաձայնագրի Ժամանակացույց 2-ի դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV— ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանը հետևյալն է՝ Ստացողն ընդունել է Ընկերակցության պահանջները բավարարող Գործառնական ձեռնարկ:

4.02. Ուժի մեջ մտնելու ժամկետը սույն Համաձայնագրի օրվան հաջորդող հարյուր քսան (120) օրն է:

4.03. Ընդհանուր դրույթների 8.05 (բ) Բաժնի իմաստով՝ սույն Համաձայնագրի շրջանակներում Ստացողի ստանձնած պարտավորությունները (բացառությամբ վճարումներ նախատեսող պարտավորությունների) դադարում են սույն Համաձայնագրի օրվանից քսան տարի անց:

ՀՈԴՎԱԾ V— ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ՀԱՍՑԵՆԵՐ

5.01. Ստացողի ներկայացուցիչն է ֆինանսների նախարարը:

5.02. Ստացողի հասցեն է՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

Երևան 0010

Հայաստանի Հանրապետություն

Ֆաքս.

+37460-700-358

5.03. Ընկերակցության հասցեն է՝

International Development Association

1818 H Street, N.W.

Washington, D.C.20433

United States of America

Հեռագրային հասցե.	Տելեքս.	Ֆաքս.
INDEVAS	248423 (MCI)	1-202-477-6391
Washington, D.C.		

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է _____, _____՝ վերն առաջինը նշված ամսաթվին և տարեթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

ԱԱՀ՝ _____

Պաշտոն՝ _____

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

ԱԱՀ՝ _____

Պաշտոն՝ _____

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի նկարագիր

Ծրագրի նպատակներն են. (i) բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը և (ii) հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ I: Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում

1. Ծրագրով ընտրված ՀՍԾՏԿ-ների կառուցում, վերակառուցում, վերանորոգում, կահավորում և սարքավորումներով զինում (i) դրանց էլեկտրականության ու ջրի մատակարարման և կոյուղու համակարգերը բարելավելու, (ii) շենքերի սեյսմակայունությունն ուժեղացնելու, (iii) հաշմանդամների համար շենքերի մատչելիությունը բարելավելու միջոցով:
2. ՀՍԾՏԿ-ների կառավարման տեղեկատվական համակարգերի հզորացում հետևյալ միջոցներով. (i) աջակցում կառավարման տեղեկատվական նշված համակարգի աշխատանքին, (ii) անհրաժեշտ ծրագրային ապահովման մշակում և (iii) տեղեկատվական տեխնոլոգիաների գծով օժանդակության տրամադրում:
3. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրմանը և ներդրմանն աջակցող իրավական ակտերի մշակում:
4. ՀՍԾՏԿ-ների աշխատակազմի վերապատրաստում համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման գծով, ներառյալ. (i) ուսումնական նյութերի և ձեռնարկների մշակում, (ii) ՀՍԾՏԿ-ների և ԱՍՀՆ աշխատակզմերի գործնական վերապատրաստում, (iii) մենտորություն և ուսուցում աշխատատեղերում:

5. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման վերաբերյալ հանրային քարոզչության միջոցառումների իրականացում, ներառյալ (i) իրազեկման քարոզարշավներ և (ii) տպված նյութերի մշակում և տպագրում:

6. ԶՊԾԳ և ԲՍՓԳ կենտրոնական գրասենյակների վերակառուցում, վերանորոգում, կահավորում և սարքավորումներով զինում (i) դրանց էլեկտրականության ու ջրի մատակարարման և կոյուղու համակարգերը բարելավելու, (ii) շենքերի սեյսմակայունությունն ուժեղացնելու, (iii) հաշմանդամների համար շենքերի մատչելիությունը բարելավելու միջոցով:

Բաղադրիչ II. Աջակցություն Ստացողի Զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը

1. ՊԶԾԳ կենտրոնական ծառայություններ տրամադրելու կարողությունների հզորացում (i) ՊԶԾԳ աշխատակազմի համար վերապատրաստման միջոցառումներ իրականացնելու, (ii) ՊԶԾԳ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի բարելավման, այդ թվում ԳՈՐԾ համակարգի արդիականացման միջոցով:

2. Աշխատաշուկայի ծրագրերի փորձարկում (ա) հմտություններ չունեցող երիտասարդներին ուղղված ԱՇԱԾ մշակելու և իրականացնելու միջոցով, (բ) ինքնազբաղվածության և փոքր բիզնեսների ստեղծմանը աջակցող ԱՇԱԾ մշակելու և իրականացնելու միջոցով, (գ) ծրագրերի մասնակիցներին վերապատրաստում և մենտորություն տրամադրելու միջոցով, (դ) բիզնես պլաններ մշակելու միջոցով:

3. Որոշակի հմտությունների ուղղությամբ կարյերային կողմնորոշման ընդլայնում (i) ՄԿՄԿ-ի տեղեկատվական համակարգը բարելավելու, (ii) առցանց խորհրդատվություն և ՄԿՄԿ կայքի միջոցով մատչելի հեռահար ուսուցման ծրագրեր մշակելու, (iii) մասնագիտական կողմնորոշման ստուգման ծրագրային ապահովում մշակելու և ներդնելու միջոցով:

4. Աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների անցկացում:

5. ՊԶԾԳ մշտադիտարկման և գնահատման կարողությունների հզորացում, այդ թվում՝ Ծրագրի Բաղադրիչ II.2-ի շրջանակներում փորձարկված ԱՇԱԾ-երի ազդեցության գնահատումներ իրականացնելու միջոցով:

Բաղադրիչ III: Կենսաթոշակային համակարգի արդիականացում

ՀՍԾԿ պահանջներին համահունչ ՍԱՊԾ հիմնական բիզնես գործընթացների բարելավում և արդիականացում (i) տեղեկատվական տեխնոլոգիայի գծով ներդրումների, (ii) ՍԱՊԾ կենսոթաշակային էլեկտրոնային տեղեկատվական համակարգ մշակելու, (iii) խարդախության և սխալների վերահսկողության ռիսկահեն համակարգ և ծրագրային ապահովում մշակելու, (iv) կենսաթոշակային բարեփոխումների զանազան հարցերի և հիմնական ու նոր բիզնես գործընթացների (այդ թվում՝ համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի համար կենտրոնական վճարային ծառայությունների) գծով վերապատրաստման միջոցով ՍԱՊԾ և ՀՍԾՏԿ-ների կարողությունները զարգացնելու, (v) ընտրված պետություններում սոցիալական ձեռնարկության կառավարման ծրագրային ապահովումն ու դրա աշխատանքը վերլուծելու նպատակով ՍԱՊԾ աշխատակազմի համար ուսումնական այց կազմակերպելու միջոցով:

Բաղադրիչ IV: ԱՍՀՆ վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում

ԱՍՀՆ կազմում մշտադիտարկման ու գնահատման ստորաբաժանման կարողությունների հզորացում և սոցիալական պաշտպանության նպաստների ու ծառայությունների մշտադիտարկման ու գնահատման համալիր համակարգի մշակում, այդ թվում՝ (i) տեղեկատվական և տեխնոլոգիաների սարքավորումների տրամադրում, (ii) անհրաժեշտ ծրագրային ապահովման մշակում, (iii) մշտադիտարկման և գնահատման մոդելի մշակում, ինչպես նաև սոցիալական պաշտպանության բարեփոխումների տարբերակների զանազան ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում, (iii) ԱՍՀՆ մշտադիտարկման ու գնահատման մասնագետների վերապատրաստման ապահովում:

Բաղադրիչ V: Ծրագրի կառավարում

Ծրագրի կառավարման աջակցում, ներառյալ ֆինանսավորման տրամադրում (i) ԾԻԳ-ի և ԾՀԳ-ի լրացուցիչ գործառնական ծախսերի, (ii) վերապատրաստումների իրականացման և (ii) Ծրագրի աուդիտի համար:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Ծրագրի իրականացում

Բաժին I: **<u>Իրականացման մեխանիզմներ</u>**

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ

1. Ստացողը.

(ա) Ծրագրի պատշաճ վերահսկման, համակարգման և իրականացման նպատակով՝ Ծրագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկամսյա ժամկետում, ստեղծում է Կառավարման խորհուրդ, որի կազմն ու լիազորությունները բավարարում են Բանկի պահանջները, որը Ծրագրի ամբողջ ընթացքում պատասխանատվություն է կրում Ծրագրին առնչվող կարևոր որոշումների, Ծրագրի իրականացման ընդհանուր ընթացքը մշտադիտարկելու, ռազմավարական հարցերում ուղղություն ապահովելու և Ծրագրի միջոցառումների իրականացման ընթացքում առաջացող խնդիրները կարգավորելու պատասխանատվություն:

(բ) ԱՍՀՆ կազմում կազմավորում է Ծրագրի համակարգման գրասենյակ (ԾՀԳ), որն ունի Ծրագրի միջոցառումների ընդհանուր տեխնիկական համակարգման, նախապատրաստման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման պատասխանատվություն, ինչպես նաև մշտապես ապահովում է ԾՀԳ-ում Ծրագրի իրականացմանն առնչվող պարտականությունների կատարման համար անհրաժեշտ համարժեք կարողություններ և ռեսուրսներ:

(գ) Ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ) է նշանակում ԱՖԾԿԿ-ը, որը պատասխանատու է Ծրագրի ֆիդուցիար հարցերի համար (ներառյալ՝ ֆինանսական կառավարումը, գնումները) և Ծրագրի իրականացմանն առնչվող իր պարտականությունները կատարելու նպատակով ապահովում է ԱՖԾԿԿ-ի կադրային համարժեք համալրում և ռեսուրսներ:

(դ) Ծրագրի իրականացման նպատակներից ելնելով (բացառությամբ Ծրագրի II.2 Բաղադրիչի (ա) և (բ) միջոցառումների)

(i) Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական առաջադրանքի համաձայն պատրաստում է Ծրագրի իրականացման առաջարկվող ձեռնարկ, որը պարունակում է (Ա) տեխնիկական, (Բ) վարչական, (Գ) գնումների, (Դ) շրջակա միջավայրի և սոցիալական, (Ե)

ֆինանսական և հաշվապահական հաշվառման, (Զ) մշտադիտարկման և գնահատման մանրամասն ընթացակարգեր և մեխանիզմներ.

(ii) ներկայացնում է վերոնշյալ ձեռնարկն Ընկերակցության ուսումնասիրությանն ու հաստատմանը, տալիս է Ընկերակցությանը Ստացողի հետ վերոնշյալ ձեռնարկի վերաբերյալ կարծիքներ փոխանակելու խելամիտ հնարավորություն, հաջորդիվ ընդունում է վերոնշյալ ձեռնարկի Ընկերակցության հաստատած տարբերակը («Գործառնական ձեռնարկ»):

(iii) Ծրագրի միջոցառումներն իրականացնում է Գործառնական ձեռնարկի համաձայն, չի փոփոխում և չի կասեցնում նշված Գործառնական ձեռնարկի որևէ դրույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկարկցության հետ ձեռք է բերվել գրավոր այլ համաձայնություն:

2. Ծրագրի II.2 Բաղադրիչի (ա) և (բ) միջոցառումների իրականացման նպատակներից ելնելով Ստացողը՝

(ա) Ընկերակցության հաստատմանն է ներկայացնում աշխատաշուկայի ակտիվ ծրագրի շրջանակներում որակավորում չունեցող երիտասարդներին և/կամ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմնան ուղղված պիլոտային ծրագրերի նախագծի և իրականացման մանրամասն առաջարկ:

(բ) Ընկերակցության կաղմից մանրամասն առաջարկը հաստատելուն հաջորդիվ՝ Ընկարակցության պահանջները բավարարող տեխնիկական առաջադրանքի համաձայն պատրաստում է որակավորում չունեցող երիտասարդներին հասցեագրված ԱՇԱԾ-ի և ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմնան ուղղված ԱՇԱԾ-ի գործառնական առաջարկվող ձեռնարկներ, որոնք պարունակում են (Ա) տեխնիկական, (Բ) վարչական, (Գ) գնումների, (Դ) շրջակա միջավայրի և սոցիալական, (Ե) ֆինանսական և հաշվապահական հաշվառման, (Զ) մշտադիտարկման և գնահատման մանրամասն ընթացակարգեր և մեխանիզմներ. Վերոնշյալ ձեռնարկները պետք է ընդգրկեն հետևյալ մանրամասները. (i) Ծրագրի II.2 Բաղադրիչի միջոցառումների իրականացման պայմանների և, եթե կիրառելի է, իրավական համաձայնագրերի նկարագրությունը, ինչպես նաև միջոցառումների ընտրությանը և դրանց համապատասխան ֆինանսավորմանը (ներառյալ ընտրված Շահառուներին Կանխիկ դրամաշնորհների միջոցով), բողոքարկման մեխանիզմներին կիրառելի կանոնները, մեթոդները, ուղեցույցերը, պահանջները, համապատասխանության չափորոշիչները և որոշումների կայացման գործընթացները, (ii) ֆինանսական միջոցների շարժը և կառավարման

ընթացակարգերը, (iii) Կանխիկ դրամաշնորհների պահանջներին համապատասխանությունը հավաստելու մեխանիզմներ.

(գ) ներկայացնում է վերոնշյալ ձեռնարկներն Ընկերակցության ուսումնասիրությանն ու հաստատմանը, հաջորդիվ ընդունում է վերոնշյալ ձեռնարկների Ընկերակցության հաստատած տարբերակը («ԱՇԱԾ-ի Գործառնական ձեռնարկ»):

(դ) Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ապահովում է Նախարարության հանձնաժողովի գործունեությունը՝ Ընկերակցության պահանջները բավարարող և ԱՇԱԾ-ի Գործառնական ձեռնարկներում սահմանված կառուցվածքով, գործառույթներով և լիազորություններով: Վերոնշյալ գործառույթները և լիազորություններն ընդգրկում են. (i) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատմանը ներկայացնել որակավորում չունեցող երիտասարդներին հասցեագրված յուրաքանչյուր ԱՇԱԾ-ի և/կամ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմնան ուղղված յուրաքանչյուր ԱՇԱԾ-ի Շահառուների առաջարկվող ցանկ, որը համապատասխանում է ԱՇԱԾ Գործառնական ձեռնարկներում սահմանված չափորոշիչներին, պահանջներին և ընտրության ընթացակարգերին. և

(ե) միջոցառումներն իրականացնում է ԱՇԱԾ-երի Գործառնական ձեռնարկների համաձայն, չի փոփոխում և չի կասեցնում նշված ԱՇԱԾ-երի Գործառնական ձեռնարկների որևէ դրույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկարկցության հետ ձեռք է բերվել գրավոր այլ համաձայնություն:

3. Անկախ վերոնշյալից, Ծրագրի Գործառնական ձեռնարկի կամ ԱՇԱԾ-երի Գործառնական ձեռնարկի և Ֆինանսավորման համաձայնագրի դրույթների միջև հակասության դեպքում՝ գերակայում են Ֆինանսավորման համաձայնագրի դրույթները:

4. ԱՇԱԾ-ի Գործառնական ձեռնարկները հաստատելուց հետո՝ ոչ ուշ քան քառասուն հինգ (45) օրվա ընթացքում, Ստացողը ձևավորում և Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում գործադրում է բողոքարկման հասանելի մեխանիզմ, որն ընդունելի է Ընկերակցության կողմից և որի նպատակն է կարգավորել ԱՇԱԾ-երի Շահառուների ընտրությանը և Կանխիկ դրամաշնորհների տրամադրմանն առնչվող բողոքները:

5. Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով Ստացողն իրականացնում է հանրային իրազեկման/տեղեկատվական քարոզարշավներ պիլոտային ԱՇԱԾ-երի և Կանխիկ դրամաշնորհների վճարման վերաբերյալ:

6. Նախքան Ծրագրի II.2(ա) մասի իրականացման մեկնարկը Ստացողն ապահովում է.

(i) որ Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով Ստացողի և որակավորում չունեցող երիտասարդներին հասցեագրված ԱՇԱԾ-ին մասնակցող ընտրված գործատուների և այլ կազմակերպությունների միջև ստորագրվեն Վերպատրաստման համաձայնագրեր: Ստացողն ապահովում է նաև, որ (ա) Վերապատրաստման համաձայնագրի օրինակելի ձևը՝ նախքան դրա ստորագրումը, ներկայացվի Ընկերակցության ուսումնասիրությանն ու հաստատմանը, (բ) Վերապատրաստման համաձայնագրերը ստորագրվեն և ուժի մեջ մտեն նախքան ընտրված գործատուներին և կազմակերպություններին Ֆինանսավորման հասույթներից փոխանցումներ կատարելը, (գ) Վերապատրաստման համաձայնագրերը կատարվեն պատշաճ խելամտությամբ և արդյունավետությամբ, Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական, ֆինանսական և կառավարչական չափանիշերի և պրակտիկայի, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ուղեցույցերի համաձայն:

(ii) Վերապատրաստման համաձայնագրերով իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների կատարումն այնպիսի եղանակով, որը պաշտպանում է Ստացողի և Ընկերակցության շահերը և ծառայում է Ֆինանսավորման նպատակների իրականացմանը: Ստացողը չի օտարում, փոփոխում, չեղյալ ճանաչում, դադարեցնում, կասեցնում և հրաժարրվում իրավապարտադրել Վերապատրաստման համաձայնագիրը կամ դրա որևէ դրույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկարկցության հետ ձեռք է բերվել այլ համաձայնություն:

Բ. Հակակոռուպցիոն միջոցներ

Ստացողը երաշխավորում է Ծրագիր իրականացումը՝ Հակակառուպցիոն ուղեցույցերի դրույթների համաձայն:

Գ. Անվտանգության մեխանիզմներ

1. Ստացողն իրականացնում է Ծրագիրն Անվտանգության մեխանիզմների շրջանակների և Անվտանգության մեխանիզմների բոլոր փաստաթղթերի համաձայն: Այս իմաստով Ստացողը ձեռնարկում է հետևյալ միջոցները.

(ա) Եթե Ծրագրում ընդգրկված որևէ միջոցառում ՇՄՍԿՇ-ի համաձայն պահանջում է ՇՄԿՊ-ի իրականացում, ապա նման միջոցառումը չի իրականացվում քանի դեռ.

(i) (Ա) ՇՄՍԿՇ-ի համաձայն չի պատրաստվել և որպես Տարեկան աշխատանքների պլանի մեկ մաս չի ներկայացվել, (Բ) ՇՄՍԿՇ-ի պահանջների համաձայն տեղական մակարդակով չի հրապարակվել և (Գ) Ընկերակցության հաստատումը չի ստացել և հանրորեն հրապարակվել նման միջոցառման ՇՄԿՊ:

(բ) թե Ծրագրում ընդգրկված որևէ միջոցառում ՏՔՇ- համաձայն պահանջում է ՏԳՊ-ի իրականացում, ապա նման միջոցառումը չի իրականացվում քանի դեռ.

(i) (Ա) ՏՔՇ-ի պահանջների համաձայն չի պատրաստվել և որպես Ընկերակցությանը չի ներկայացվել, (Բ) ՏՔՇ-ի պահանջների համաձայն չի հրապարակվել և (Գ) Ընկերակցության հաստատումը չի ստացել նման միջոցառման ՏԳՊ. և

(ii) (Ա) չեն ձեռնարկվել վերոնշյալ ՏԳՊ-ով պահանջվող բոլոր այն միջոցները, որոնք նախորդում են տվյալ միջոցառմանը, այդ թվում, առանց վերոնշյալը սահմանափակելու, չեն տրամադրվել տարաբնակեցման փոխհատուցման միջոցներ, եթե դրանց տրամադրումը պահանջվում է ՏԳՊ-ով, (Բ) չի պատրաստվել և Ընկերակցությանը չի ներկայացվել վերոնշյալ ՏԳՊ-ի պահանջներին համապատասխանելու կարգավիճակի մասին հաշվետվություն, որի ձևաչափը և բովանդակությունը բավարարում են Ընկերակցության պահանջները, (Գ) Ընկերակցությունը չի հաստատել, որ կարելի է սկսել վերոնշյալ միջոցառումը:

2. Ի հավելումն սույն Համաձայնագրով նախատեսված հաշվետվականության իր այլ պարտավորությունների՝ Ստացողը կանոնավոր հավաքում է, կազմում և ցպահանջ Ընկերակցությանը ներկայացնում՝ վերջինիս պահանջները բավարարող ձևաչափով և բովանդակությամբ, Անվտանգության մեխանիզմներին հետևյալների համապատասխանության կարգավիճակի մասին հաշվետվություններ.

(ա) Անվտանգության մեխանիզմների նման գործիքներին ի հավելումն ձեռնարկած միջոցներ.

(բ) Անվտանգության մեխանիզմների նման գործիքների սահուն իրականացմանը միջամտող կամ միջամտության սպառնալիք առաջացնող պայմաններ, եթե այդպիսիք գոյություն ունեն.

(գ) նման պայմանները հասցեագրելու համար ձեռնարկված կամ պահանջվող կարգավորող միջոցներ:

3. Սույն Գ Մասի 2րդ պարբերության մեջ նշված հաշվետվություններն ուսումնասիրելու համար Ստացողը խելամիտ հնարավորություն է ընձեռում Ընկերակցությանը և, հաջորդիվ, պատշաճ ջանասիրությամբ իրականացնում է կամ պահանջում է իրականացնել Ընկերակցության հետ համաձայնեցված կարգավորման բոլոր միջոցառումները՝ նպատակ ունենալով ապահովել Ծրագրի պատշաճ իրականացումն Անվտանգության մեխանիզմների գործիքների համաձայն:

Բաժին II. <u>Ծրագրի մշտադիտարկում, հաշվետվականություն և գնահատում</u>

Ա. Ծրագրի հաշվետվություններ

1. Ստացողն իրականացնում է Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում, պատրաստում է Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր դրույթների 4.08 բաժնի դրույթներին համապատասխան և Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշերի հիման վրա: Ծրագրի մասին յուրաքանչյուր հաշվետվություն ընդգրկում է մեկ օրացուցային կիսամյակ ժամանակահատված և Ընկերակցությանն է ներկայացվում ոչ ուշ, քան նման հաշվետվության ժամանակահատվածից մեկ ամիս անց:

2. Ընդհանուր դրույթների 4.08 (գ) Բաժնի նպատակներից ելնելով՝ Ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և նշված Բաժնի համաձայն պահանջվող հարակից պլանը Ընկերակցությանն են ներկայացվում ոչ ուշ, քան Ծրագրի փակման օրվանից չորս (4) ամիս առաջ:

Բ. Ֆինանսական կառավարում, Ֆինանսական հաշվետվություններ և Աուդիտներ

1. Ստացողը վարում կամ պահանջում է վարել ֆինանսական կառավարման համակարգ՝ Ընդհանուր դրույթների 4.09 Բաժնի պահանջների համաձայն:

2. Ի հավելումն սույն Բաժնի Ա Մասի դրույթների, Ստացողը պատրաստում և յուրաքանչյուր օրացույցային կիսամյակի ավարտից ոչ ուշ քան քառասունհինգ (45) օր անց

Ընկերակցությանն է ներկայացնում վերջինիս պահանջները բավարարող ձևաչափով և բովանդակությամբ միջանկյալ, աուդիտ չանցած Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծրագրի մասին հաշվետվության մաս և ընդգրկում են տվյալ կիսամյակը:

3. Ստացողի ֆինանսական հաշվետվությունները պետք է անցնեն աուդիտ՝ Ընդհանուր դրույթների 4.09(բ) բաժնի դրույթների համաձայն: Ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր աուդիտ ընդգրկում է Ստացողի մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված: Նման յուրաքանչյուր ժամանակահատվածի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններն Ընկերակցությանն են ներկայացվում ոչ ուշ, քան նման ժամանակահատվածի ավարտից վեց ամիս անց:

Բաժին III. <u>Գնումներ</u>

1. Ապրանքներ, աշխատանքներ և ոչ խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի համար պահանջվող և Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Գնումների ուղեցույցերի բաժին I-ում սահմանված կամ դրանում հղում կատարված պահանջների և սույն բաժնի դրույթների համաձայն:

2. Խորհրդատուների ծառայություններ: Ծրագրի համար պահանջվող և Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր խորհրդատուների ծառայությունները ձեռք են բերվում Խորհրդատուի ուղեցույցերի բաժիններ I և IV-ում սահմանված կամ դրանցում հղում կատարված պահանջների և սույն բաժնի դրույթների համաձայն:

3. Սահմանումներ: Գնումների առանձին մեթոդները կամ Ընկերակցության կողմից առանձին պայմանագրերն ուսումնասիրելու մեթոդները նկարագրելու համար սույն բաժնում ստորև մեծատառ օգտագործված հասկացությունները, ելնելով հանգամանքներից, հղում են կատարում Գնումների ուղեցույցերի II և III Բաժիններում կամ Խորհրդատուի ուղեցույցերի II, III, IV և V Բաժիններում նկարագրված համապատասխան մեթոդին:

Բ. Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման առանձին մեթոդներ

1. Միջազգային մրցակցային գնումներ: Բացառությամբ ստորև պարբերություն 2-ում ներկայացվածի՝ ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Միջազգային մրցակցային գնումների հիման վրա կնքված պայմանագրերով:

2. Աշխատանքների, ապրանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման այլ մեթոդներ: Բացի Միջազգային մրցակցային գնումներից՝ Գնումների պլանում նշված պայմանագրերով ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար կարող են կիրառվել հետևյալ մեթոդները.

Գնումների մեթոդ
ա) Փոխառուի Ազգային մրցակցային գնումների մեթոդը կարող է կիրառվել Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ պայմանով, որ բավարարվում են հետևյալ պայմանները. (i) այն կազմակերպությունները, որոնց մեծամասնական բաժնետեր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, չեն ստանում կառավարության համար կազմակերպվող մրցույթներին մասնակցելու հրավեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրավաբանորեն և ֆինանսապես անկախ են ու կարող են ներկայանալ որպես այդպիսիք և կարող են գործել առևտրային օրենսդրության շրջանակում. (ii) հետորակավորման չափանիշերը վերաբերում են միայն մրցույթի մասնակիցների նախկին պայմանագրային կատորաղականին, ֆինանսական, կառավարչական ու տեխնիկական կարողություններին. (iii) համատեղ ձեռնարկության գործընկերները համապարտ պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների համար. (iv) պայմանագրի հաշվարկային գները չեն հրապարակվում. (v) հայտերի բացման պահին որևէ հայտ չի մերժվում. (vi) որևէ հայտ չի մերժվում բացառապես հաշվարկային գինը գերազանցելու հիմքով: հայտերը չեղյալ են հայտարարվում և նոր հայտեր ներկայացնելու հրավեր է տրվում միայն այն դեպքում, երբ բավարարվել են Գնումների ուղեցույցերի 2.61 կետի պայմանները.

(vii) հայտի գնահատման բոլոր չափանիշերը քանակապես չափելի են դրամական արտահայտությամբ կամ ներկայացվում են բավարար/անբավարար չափանիշերով. (viii) Բանկի նախնական հաստատում է պահանջվում իրականացման ընթացքում պայմանագրի շրջանակի/պայմանների էական որևէ փոփոխության դեպքում:
(բ) Շոփինգ
(գ) Ուղղակի պայմանագիր

Գ. Խորհրդատուների ծառայությունների գնման առանձին մեթոդներ

1. Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն: Բացառությամբ՝ ստորև պարբերություն 2-ում ներկայացված դեպքերի, խորհրդատուների ծառայությունները գնվում են Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության հիմքով կնքված պայմանագրերով:

2. Խորհրդատուների ծառայությունների գնման այլ մեթոդներ: Բացի Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության, Գնումների պլանում նշված պայմանագրերով խորհրդատուների ծառայություններ ձեռք բերելու համար կարող են կիրառվել հետևյալ մեթոդները.

Ընտրության մեթոդ
(ա) Որակի վրա հիմնված ընտրություն
(բ) Ֆիքսված բյուջեով ընտրություն
(գ) Նվազագույն արժեքի ընտրություն
(դ) Խորհրդատուների որակավորման վրա հիմնված ընտրություն
(ե) Մեկ աղբյուրի ընտրություն
(զ) Անհատ խորհրդատուների ընտրության համար Խորհրդատուների ուղեցույցերի 5.2-ից 5.4 պարբերություններում սահմանված ընթացակարգեր

Դ. Գնումների որոշումների ուսումնասիրություն Բանկի կողմից

Գնումների պլանը սահմանում է այն պայմանագրերը, որոնք ենթակա են Բանկի նախնական ուսումնասիրությանը: Բոլոր մյուս տեսակի պայմանագրերը ենթակա են Բանկի հետուսումնասիրությանը:

Բաժին IV. <u>Ֆինանսավորման հասույթների առհանում</u>

Ա. Ընդհանուր

1. Ստորև՝ պարբերություն 2-ի աղյուսակում սահմանված Ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով Ստացողը կարող է առհանել Ֆինանսավորման հասույթները՝ Ընդհանուր դրույթների Հոդված II-ի, սույն բաժնի դրույթների և Ընկերակցության կողմից Ստացողին տրված ծանուցման մեջ սահմանված լրացուցիչ ցուցումների համաձայն (ներառյալ՝ 2006թ. մայիսի «Ծրագրերի համար Համաշխարհային Բանկի վճարման ուղեցույցերը», որոնք ժամանակ առ ժամանակ վերանայվում են Բանկի կողմից և կիրառելի դառնում սույն Համաձայնագրին՝ նման ցուցումներին հաջորդիվ):

2. Հաջորդող աղյուսակում սահմանվում են Ընդունելի ծախսերի դասակարգերը, որոնք կարող են ֆինանսավորվել Ֆինանսավորման հասույթների հաշվին («Դասակարգ»), Ֆինանսավորման գումարների հատկացումը յուրաքանչյուր Դասակարգին և յուրաքանչյուր Դասակարգում ֆինանսավորման ենթակա Ընդունելի ծախսերի մասնաբաժինը.

Դասակարգ	**Վարկի հատկացված գումարը (արտահայտված ՀՓԻ-ով)**	**Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի)**
(1) Ծրագրի շրջանակում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ,	12 800 000	100%

խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի Բաղադրիչ II.2-ի միջոցառումների:		
(2) Ծրագրի Բաղադրիչ II.2-ի շրջանակում Կանխիկ դրամաշնորհներ և խորհրդատվական ծառայություններ,	1 100 000	100%
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	13 900 000	100%

Բ. Առհանման պայմաններ, առհանման ժամանակահատված

1. Անկախ սույն Բաժնի Ա մասի դրույթներից, առհանում չի կատարվում.

(ա) նախքան սույն Համաձայնագրի ամսաթիվը կատարած վճարումների համար:

(բ) (2) Դասակարգի Ընդունելի ծախսերի համար, բացառությամբ եթե (i) Ստացողը սույն Համաձայնագրի 2րդ Լրացման I.A.2(գ) բաժնի համաձայն ընդունել ԱՇԱԾ-ի Գործառնական ձեռնարկներ, որոնք հաստատվել են Բանկի կողմից, (ii) Ստացողը սույն Համաձայնագրի 2րդ Լրացման I.A.7 բաժնի համաձայն՝ ըստ կիրառելիության, կնքել է համաձայնագրերը:

2. Փակման ժամկետն է 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3

Մարման ժամանակացույց

Մայր գումարի մարման օր	**Վարկի մարման ենթակա մայր գումար (արտահայտված որպես տոկոս)***
Յուրաքանչյուր մարտի 15-ին և սեպտեմբերի 15 –ը	
սկսած 2019 թ-ի սեպտեմբերի 15-ից մինչև և ներառյալ 2029թ-ի մարտի 15-ը	1.65%
սկսած 2029 թ-ի սեպտեմբերի 15-ից մինչև և ներառյալ 2039թ-ի մարտի 15-ը	3.35%

* Տոկոսները ներկայացնում են Վարկի մարման ենթակա մայր գումարի տոկոսները, բացառությամբ այն դեպքերի, որոնք Ընկերակցությունը կարող է սահմանել Ընդհանուր դրույթների 3.03(բ) բաժնի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բաժին I. Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ուղեցույցեր» նշանակում է 2006թ. հոկտեմբերի 15-ին ընդունված և 2011թ. հունվարին վերանայված «ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքը և կոռուպցիան կանխելու և դրա դեմ պայքարելու ուղեցույցերը»:
2. «ԱՇԱԾ» նշանակում է Ստացողի աշխատաշուկայի ակտիվ ծրագիր, որը հանդիսանում է վերջինիս սոցիալական պաշտպանության համակարգի մաս:
3. «ԱՇԱԾ Շահառուներ» նշանակում է որակավորում չունեցող երիտասարդներին հասցեագրված ԱՇԱԾ-ի և/կամ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմնան ուղղված ԱՇԱԾ-ի մեկից ավելի Շահառու:

4. «ԱՇԱԾ Գործառնական ձեռնարկներ» նշանակում է Ծրագրի II.2 (ա) և (բ) մասերի միջոցառումներին համապատասխանող ձեռնարկներ, որոնք պատրաստվել և ընդունվել են Ծրագրի 2րդ Լրացման I.Ա.2 բաժնի պահանջների համաձայն:

5. «Որակավորում չունեցող երիտասարդների ԱՇԱԾ-ի Շահառուներ» նշանակում է ԱՇԱԾ Գործառնական ձեռնարկներում սահմանված համապատասխանության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն (i) ընտրված անհատներ, որոնք ստանում են Կանխիկ դրամաշնորհի տեսքով կրթաթոշակներ՝ զբաղվածունակության վերապատրաստման մասնակցելու համար, և/կամ (ii) Ծրագրի II.2(ա) Մասի շրջանակներում Կանխիկ դրամաշնորհներ ստացող ընտրված գործատուներ կամ այլ կազմակերպություններ, որոնք հմտություններ չունեցող երիտասարդներին են տրամադրում զբաղվածունակության վերապատրաստում:

6. «Ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմնան ուղղված ԱՇԱԾ-ի Շահառուներ» նշանակում է ԱՇԱԾ Գործառնական ձեռնարկներում սահմանված համապատասխանության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն ընտրված անհատներ, ովքեր Կանխիկ դրամաշնորհներ են ստանում (i) իրենց ներկայացրած բիզնես պլանի համապատասխան փոքր բիզնես հիմնելու համար կամ (ii) զբաղվածունակության վերապատրաստման մասնակցելու համար:

7. «ԲՍՓԳ» նշանակում է Ստացողի ԱՍՀՆ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն:

8. «Կանխիկ դրամաշնորհ» նշանակում է Ծրագրի II.2 Մասի շրջանակներում ԱՇԱԾ-ի Շահառուներին ԱՇԱԾ Գործառնական ձեռնարկներկի դրույթների համապատասխան Ստացողի (ԾԻԳ-ի միջոցով) կատարած միանվագ կանխիկ փոխանցում:

9. «Դասակարգ» նշանակում է սույն Համաձայնագրի Ժամանակացույց 2-ի IV Բաժնում սահմանված դասակարգ:

10. «Խորհրդատուի ուղեցույցեր» նշանակում է 2011 թ. հունվարին ընդունված «Ուղեցույցեր. Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և ներգրավում» փաստաթուղթը:

11. «Տեղահանված անձ» նշանակում է անձ, ով Ծրագրի որևէ գործողության իրականացման արդյունքում կրել է կամ կրելու է տնտեսական և սոցիալական ուղղակի ազդեցություններ, որոնք պայմանավորված են. (ա) հողի պարտադրված առգրավումով, որը հանգեցնում է. (i) կացարանի տեղահանման կամ կորստի, (ii) հիմնական միջոցների կամ հիմնական միջոցների մատչելիության կորստի, (iii) եկամուտի աղբյուրների կամ կենսագոյության միջոցների կորստի՝ անկախ տվյալ անձի այլ վայր տեղափոխվելու հանգամանքից, կամ (բ) օրենքով սահմանված պուրակների և պահպանվող տարածքների մուտքի պարտադրված սահմանափակում, որը բացասաբար է ազդում նման անձի կենսագոյության վրա: «Տեղահանված անձիք» նշանակում է նմանօրինակ բոլոր անձիք:

12. «Բնապահպանական կառավարման պլան» և «ԲԿՊ» նշանակում է Ծրագրի բնապահպանական կառավարման պլան, որը մշակվելու և իրականացվելու է ՇՄՍԿՇ-ի և Համաձայնագրի 2րդ Լրացման I.C.1 (ա) Բաժնի դրույթների համաձայն: «ԲԿՊ-ներ» նշանակում է մեկ ԲԿՊ-ից ավելի:

13. «Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման շրջանակ» և «ՇՄՍԿՇ» նշանակում է Ստացողի Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման շրջանակը, որը 2013 թ-ի դեկտեմբերի 30-ին հրապարակվել է Ստացողի տարածքում և 2014 թ-ի հունվարի 15-ին Ընկերակցության Ինֆոշոփում, ուր մանրամասն ներկայացված են. (ա) Ծրագրի իրականացման և գործողության ընթացքում բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները վերացնելու, հավասարակշռելու կամ ընդունելի մակարդակների նվազեցնելու նպատակով ձեռնարկելիք միջոցառումները և (բ) այդ միջոցառումներն իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ մշտադիտարկումն ու ինստիտուցիոնալ հզորացումը:

14. «Ընդհանուր դրույթներ» նշանակում է 2010թ. հուլիսի 31-ի «Միջազգային զարգացման ընկերակցության վարկերի և դրամաշնորհների ընդհանուր դրույթները»՝ սույն Հավելվածի II Բաժնում նշված փոփոխություններով:

15. «ԳՈՐԾ» նշանակում է ՊԶԾԳ կառավարման տեղեկատվական համակարգը:

16. «Լրացուցիչ գործառնական ծախսեր» նշանակում է Ծրագրին առնչությամբ սարքավորումների և ավտոմեքենաների պահպանման, վառելիքի, գրենական պիտույքների, գրասենյակային փոքր սարքավորումների, գրականության, գործուղումների, հանդիպումների և

երկրի ներսում ճանապարհածախսերի գծով Ստացողի, ԾԻԳ-ի կամ ԾՀԳ-ի կատարած լրացուցիչ ծախսերը, ԾԻԳ-ի աշխատակիցների աշխատավարձերը (բացառությամբ Կառավարության գործող պաշտոնյաների աշխատավարձերը), վերապատրաստման, ուսումնական այցերի, կապի ծախսերը, խելամիտ բանկային վճարները լրատվամիջոցներում գովազդման և Ընկերակցության հետ համաձայնեցված այլ ծախսերը:

17. «ՀՍԾԿ-ներ» նշանակում է ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 952 որոշման համաձայն ստեղծված Ստացողի Համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնները, որոնք պատասխանատու են սոցիալական պաշտպանության համալիր ծառայությունների մատուցման համար:

18. «Նախարարական հանձնաժողով» նշանակում է ԱՇԱԾ-երի իրականացման նպատակով նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը, որը կազմված է ԱՍՀՆ զանազան ներկայացուցիչներից:

19. «ԱՍՀՆ» նշանակում է Ստացողի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կամ դրա իրավահաջորդը:

20. «ՖՆ» նշանակում է Ստացողի ֆինանսների նախարարությունը կամ դրա իրավահաջորդը:

21. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է սույն Համաձայնագրի 2րդ Լրացման Ի.Ա.1 բաժնի պահանջների համաձայն Ծրագրի համար մշակված և ընդունված ձեռնարկ:

22. «ԾՀԳ» նշանակում է ԱՍՀՆ կազմում ստեղծված Ծրագրի համակարգման գրասենյակ, որին հղում է կատարված սույն Համաձայնագրի 2րդ Լրացման Ի.Ա.բ բաժնում և որը պատասխանատու է Ծրագրի միջոցառումների ընդհանուր համակարգման, նախապատրաստման, իրականացման, մշտադիտարկման ու գնահատման համար:

23. «ԾԻԳ» նշանակում է ՖՆ Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնը (ԱՖԾԿԿ), որը հանդիսանում է Ծրագրի ֆիդուցիար բոլոր հարցերի համար պատասխանատու ստորաբաժանում և որին հղում է կատարված սույն Համաձայնագրի 2րդ Լրացման Ի.Ա.գ բաժնում:

24. «ՄԿՄԿ» նշանակում է 2007 թ-ի հոկտեմբերին ԱՍՀՆ ստեղծած Ստացողի «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ, որը պատասխանատու է Ստացողի տարածքում Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման համար:

25. «Գնումների ուղեցույցեր» նշանակում է Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակած «Ուղեցույցեր. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող գնումներ» փաստաթուղթը:

26. «Գնումների պլան» նշանակում է Ծրագրի համար 2014 թ. փետրվարի 5-ին Ստացողի հաստատած գնումների պլանը, որը հղում է կատարված Գնումների ուղեցույցերի 1.18 կետում և Խորհրդատուների ուղեցույցերի 1.25 կետում և որը ժամանակ առ ժամանակ վերանայվում է՝ նշված կետերի դրույթների համաձայն:

27. «Տարհանման գործողությունների պլան» և «ՏԳՊ» նշանակում է ՏՔՇ-ի և սույն Համաձայնագրի 2րդ Լրացման I.C.1 (բ) Բաժնի դրույթների համաձայն պատրաստված և իրականացված տարհանման գործողությունների պլան: «ՏԳՊ-ներ» նշանակում է մեկից ավելի նման ՏԳՊ:

28. «Տարհանման քաղաքականության շրջանակ» և «ՏՔՇ» նշանակում է Ստացողի Տարհանման քաղաքականության շրջանակ, որը 2013 թ-ի դեկտեմբերի 30-ին հրապարակվել է Ստացողի տարածքում և 2014 թ-ի հունվարի 15-ին Ընկերակցության Ինֆոշոփում, և որը պարունակում է Տեղահանված անձանձ տրամադրելիք փոխհատուցման, վերականգման և վերաբնակեցման օժանդակության տրամադրման ուղեցույցեր, ընթացակարգեր, ժամանակացույցեր և այլ մասնագրեր:

29. «Անվտանգության մեխանիզմների փաստաթղթեր» նշանակում է ՇՄԿՊ, ՏԳՊ կամ սոցիալական և շրջակա միջավայրի պաշտպանության այլ լրացուցիչ փաստաթուղթ, որը պահանջվում է Անվտանգության մեխանիզմների շրջանակների պայմաններով:

30. «Անվտանգության մեխանիզմների շրջանակներ» հավաքականորեն նշանակում է ՇՄՍԿՇ և ՏՔՇ:

31. «Անվտանգության մեխանիզմների գործիքներ» հավաքականորեն նշանակում է Անվտանգության մեխանիզմների շրջանակներ և Անվտանգության մեխանիզմների փաստաթղթեր:

32. «ՊԶԾԳ» նշանակում է ԱՍՀՆ կազմում գործող Ստացողի «Պետական զբաղվածության ծառայություն» գործակալությունը, որը Ստացողի տարածքում պատասխանատու է զբաղվածության ծառայությունների համար:

33. «ՍԱՊԾ» նշանակում է Ստացողի Սոցիալական ապահովության պետական ծառայություն:

34. «Կառավարման խորհուրդ» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման Ի.Ա.1 Բաժնի համաձայն ստեղծված, Ստացողի համապատասխան նախարարությունների և գործակալությունների ներկայացուցիչներից կազմված և Ծրագրի միջոցառումների իրականացման վերահսկողության և համակարգման համար պատասխանատու խորհուրդը կամ դրա իրավահաջորդը:

35. «Վերապատրաստում» նշանակում է Ծրագրի շրջանակում ուսումնական այցերի, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների և վերապատրաստմանն առնչվող այլ միջոցառումների գծով Ստացողի կամ ԾԻԳ-ի կատարած ծախսերը, որոնք ընդգրկում են մասնակիցների, վերապատրաստողների և վերապատրաստվողների ճանապարհածախսը և օրապահիկի ծախսերը, վերապատրաստողների վարձատրության վճարները, ուսումնական տարածքների վարձակալությունը, վերապատրաստման նյութերի մշակումն ու բազմացումը, վերապատրաստման միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը բնորոշ այլ գործողություններ և Ընկերակցության հետ համաձայնեցված այլ ծախսեր:

36. «Վերապատրաստման համաձայնագրեր» նշանակում է սույն Համաձայնագրի 2րդ Լրացման Ի.Ա.7 Բաժնում նշված և Ընկերակցության համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվող համաձայնագրերը:

Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ

Ընդհանուր պայմանների փոփոխությունները հետևյալն են.

1. 3.02 Բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բաժին 3.02. Սպասարկման վճար և տոկոսադրույքի վճար

(ա) Սպասարկման վճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի առհանված մնացորդի սպասարկման վճար՝ Ֆինանսական համաձայնագրում սահմանված դրույքաչափով: Սպասարկման վճարը հաշվեգրվում է Վարկի գումարներն առհանելու համապատասխան օրերից և կիսամյակյակը մեկ վճարվում է յուրաքանչյուր մարման օրը՝ ապառքի տեսքով:

Սպասարկման վճարը հաշվարկվում է տասներկու 30-օրյա ամիս ունեցող 360-օրյա տարվա հիման վրա:

(բ) Տոկոսադրույքի վճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի առհանված մնացորդի տոկոսադրույք՝ Ֆինանսական համաձայնագրում սահմանված դրույքաչափով: Տոկոսադրույքը հաշվեգրվում է Վարկի գումարներն առհանելու համապատասխան օրերից և կիսամյակյակը մեկ վճարվում է յուրաքանչյուր մարման օրը՝ ապառքի տեսքով: Սպասարկման վճարը հաշվարկվում է տասներկու 30-օրյա ամիս ունեցող 360-օրյա տարվա հիման վրա»:

4. Հավելվածի 28-րդ կետը («Ֆինանսավորման մարում») խմբագրվել է «Տոկոսադրույքի վճար» և «Պարտավորավճար» բառերի միջև «Տոկոսադրույքի վճար» բառերն ավելացնելով:

5. Հավելվածը փոփոխվել է՝ ավելացնելով նոր 32-րդ կետ, որում տրված է «Տոկոսադրույքի վճար» հասկացության հետևյալ սահմանումը, և կատարելով հաջորդող կետերի համապատասխան վերահամարակալում՝

«32. «Տոկոսադրույքի վճար» նշանակում է 3.02(բ) բաժնի նպատակներից ելնելով Ֆինանսավորման համաձայնագրում նշված տոկոսադրույքի վճարը»:

6. Հավելվածի վերահամարակալված 37-րդ կետը (նախկինում՝ 36-րդ կետ) խմբագրվել է՝ «Տոկոսադրույքի վճար» և «Պարտավճար» բառերի միջև «Տոկոսադրույքի վճար» բառերն ավելացնելով:

7. Հավելվածի վերահամարակալված 50-րդ կետը («Սպասարկման վճար», նախկինում՝ 49-րդ կետ) խմբագրվել է՝ փոխարինելով 3.02 Բաժնին կատարված հղումը 3.02 (ա) Բաժնին կատարվող հղումով: